# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
## ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/11 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
## ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 15.10.2021թ.

06.10.2021-15.10.2021թթ. ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի շենքում տեղի ունեցավ տնտեսական և կենցաղային սարքերի, պարագաների և նյութերի ձեռքբերման ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լուսինե Բոյաջյան «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի գլխավոր հաշվապահ,

Ցոլակ Սարգսյան «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի սպասարկման ծառայության պետ,

Ալբերտ Սահակյան «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի մեխանիկական արտադրամասի պետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Բոյաջյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Վ. Եսայանը՝ «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի գնումների համակարգող՝ քարտուղարը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և իրավերի պայմաններին համապատասխանության մասին:
5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021թ.-ի հոկտեմբերի 6-ին, ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 1՝ հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի շենքում ժամը 12:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Ջուգարանի մաքրման նյութեր | 24000 |
| 2 | Սպիտակեցնող հեղուկ՝ Ժավել | 6600 |
| 3 | Լվացքի փոշի | 5940 |
| 4 | Պոլիէթիլենային պարկ աղբի համար՝ 30լ. | 10000 |
| 5 | Պոլիէթիլենային պարկ աղբի համար՝120լ. | 8600 |
| 6 | օդի թարմեցուցիչ | 18600 |
| 7 | գոգաթիակ | 16000 |
| 8 | լաքահանիչ միջոց | 6500 |
| 9 | Զուգարանի թուղթ | 158000 |
| 10 | Ձեռքի թղթե սրբիչներ | 480000 |
| 11 | Սպասք լվանալու հեղուկ | 65000 |

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց տեղեկատվություն գրանցամատյանում կատարված նշումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | «Հարություն Կարապետյան» Ա/Ձ | ՀՎՀՀ՝ 35221952, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Եղ. Թադևոսյան նրբ./2/2/38, Հեռ.՝ +374 99 702069, էլ. հասցե՝ harut.kar66@mail.ru |
| 2 | «Սեյրան Բալասյան Արթուրի» Ա/Ձ | ՀՎՀՀ՝ 20161762, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Երզնկյան փ./Տ/27 Արաբկիր 0033, Հեռ.՝ +374 95 333757, էլ. հասցե՝ balasyan.seryan@mail.ru |
| 3 | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 07618494, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արցախի 30, Հեռ.՝ +374 77 333 330, +374 11 777 555, էլ. հասցե՝ |

| | | |
|---|---|---|
| | | Ltigranyan@arvaprof.am |
| 4 | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01263355, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Շերամի փ. 90/6, Հեռ.՝ +374 11 277070, էլ. հասցե՝ softtrade.tender@mail.ru |
| 5 | «ՍՈՖԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 02259925, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արցախի 63/3, Հեռ.՝ +374 93 575353, էլ. հասցե՝ narek.ajamyan@softpapyrus.am |
| 6 | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | ՀՎՀՀ՝ 27955992, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 103/1, Հեռ.՝ +374 91 504264, էլ. հասցե՝ gnumner.rm@mail.ru |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան և բացեց հայտերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալի.

- «Հարություն Կարապետյան» Ա/Ձ – Հավելված 1.1-ով 5-րդ չափաբաժնի մասով ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է ապրանքի չափսերի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև նշված չէ ԳՕՍՏԸ, և որ պետք է լինեն ամուր և չպատռվող, մինչդեռ այդ ամենը պահանջվել էր սույն գնման ընթացակարգի հրավերով: Հավելված 1.1-ով 10-րդ չափաբաժնի մասով ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է ապրանքի չափսերի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև նշված չէ, որ անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը ըստ ՀՀ կառավարության 2006թ. Հոկտեմբերի 19-ի Հ.1546-Ն որոշման համաձայն պետք է լինի, մինչդեռ մինչդեռ այդ ամենը պահանջվել էր սույն գնման ընթացակարգի հրավերով: Հավելված 1.1-ով 4-րդ չափաբաժնի մասով ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է ապրանքի չափսերի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև նշված չէ ԳՕՍՏԸ, ինչպես նաև 4-րդ չափաբաժինի մասով Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը չի համապատասխանում ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին:
- «Արվա Պրոֆ» ՍՊԸ – սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ով չեն պահպանվել սույն գնման ընթացակարգի հրավերով

սահմանված վավերապայմանները, մասնավորապես՝ դիմում-հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝» բառերը պետք է փոխարինվեր «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի» բառերով: ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/11 մրցույթի Հավելված 1.3-ի փոխարեն ներկայացվել է ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/138 ծածկագրով գնանշման հարցման հրավերի Հավելված 1.3: Հավելված 1.1-ով 9-րդ չափաբաժնի մասով ապրանքի ամբողջական նկարագրում երկարությունը նշված է 20մ, մինչդեռ հրավերով պահանջվել էր 27-30մ մինչդեռ այդ ամենը պահանջվել էր սույն գնման ընթացակարգի հրավերով:

- «ՍՈՖԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ – սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ով չեն պահպանվել սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմանները, մասնավորապես՝ դիմում-հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝» բառերը պետք է փոխարինվեր «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի» բառերով: ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-21/11 մրցույթի Հավելված 1.3-ի փոխարեն ներկայացվել է ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/138 ծածկագրով գնանշման հարցման հրավերի Հավելված 1.3: Հավելված 1.1-ով 10-րդ չափաբաժնի մասով ապրանքի ամբողջական նկարագրում Թղթի չափը նշվքծ է 23 x 23սմ, մինչդեռ հրավերով պահանջվել էր 24 x 22,4սմ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Զուգարանի մաքրման նյութեր | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | 24,000.00 | 24,000.00 | - | 24,000.00 |
| | | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | 24,000.00 | 23,750.00 | 4,750.00 | 28,500.00 |
| | | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | 24,000.00 | 22,500.00 | - | 22,500.00 |
| 2 | Սպիտակեցնող հեղուկ՝ ժավել | | 6,600.00 | | | |
| 3 | Լվացքի փոշի | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | 5,940.00 | 6,200.00 | - | 6,200.00 |
| | | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | 5,940.00 | 8,500.00 | - | 8,500.00 |
| 4 | Պոլիէթիլենային պարկ աղբի համար՝ 30լ. | «Հարություն Կարապետյան» Ա/Ձ | 10,000.00 | 249,500.00 | - | 249,005.00 |
| | | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | 10,000.00 | 12,000.00 | - | 12,000.00 |
| | | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | 10,000.00 | 7,083.33 | 1,416.67 | 8,500.00 |
| | | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | 10,000.00 | 8,333.00 | 1,667.00 | 10,000.00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | 10,000.00 | 10,000.00 | | 10,000.00 |
| 5 | Պոլիէթիլենային պարկ աղբի համար՝ 120լ. | «Հարություն Կարապետյան» Ա/Ձ | 8,600.00 | 78,000.00 | - | 78,000.00 |
| | | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | 8,600.00 | 4,500.00 | 900.00 | 5,400.00 |
| | | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | 8,600.00 | 10,833.00 | 2,167.00 | 13,000.00 |
| | | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | 8,600.00 | 8,000.00 | - | 8,000.00 |
| 6 | օդի թարմեցուցիչ | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | 18,600.00 | 18,600.00 | - | 18,600.00 |
| | | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | 18,600.00 | 6,000.00 | 1,200.00 | 7,200.00 |
| | | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | 18,600.00 | 15,000.00 | - | 15,000.00 |
| 7 | գոգաթիակ | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | 16,000.00 | 16,000.00 | | 16,000.00 |
| | | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | 16,000.00 | 26,000.00 | - | 26,000.00 |
| 8 | լաքահանիչ միջոց | | 6,500.00 | | | |
| 9 | Զուգարանի թուղթ | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | 158,000.00 | 125,000.00 | 25,000.00 | 150,000.00 |
| | | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | 158,000.00 | 133,333.00 | 26,667.00 | 160,000.00 |
| | | «ՍՈՖԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ | 158,000.00 | 141,666.67 | 28,333.33 | 170,000.00 |
| | | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | 158,000.00 | 145,000.00 | - | 145,000.00 |
| 10 | Ձեռքի թղթե սրբիչներ | «Հարություն Կարապետյան» Ա/Ձ | 480,000.00 | 519,000.00 | - | 519,000.00 |
| | | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | 480,000.00 | 389,166.66 | 77,833.34 | 467,000.00 |
| | | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | 480,000.00 | 366,667.00 | 73,333.00 | 440,000.00 |
| | | «ՍՈՖԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ | 480,000.00 | 358,333.33 | 71,666.67 | 430,000.00 |
| | | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | 480,000.00 | 730,000.00 | - | 730,000.00 |
| 11 | Սպասք լվանալու հեղուկ | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | 65,000.00 | 65,000.00 | - | 65,000.00 |
| | | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | 65,000.00 | 16,666.66 | 3,333.34 | 20,000.00 |
| | | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | 65,000.00 | 100,000.00 | 20,000.00 | 120,000.00 |
| | | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | 65,000.00 | 40,000.00 | - | 40,000.00 |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. 2-րդ, 8-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած, հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պահանջները:

3. «Հարություն Կարապետյան» Ա/Ձ-ի հայտը 4-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել:

4. 08.10.2021թ. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և նույն օրը համակարգի միջոցով ծանուցմամբ առաջարկել անհամապատասխանություններ արձանագրած մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված

անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Բոլոր մասնակիցների կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 4 | «Հարություն Կարապետյան» Ա/Ձ | անբավարար |
| 5, 10 | «Հարություն Կարապետյան» Ա/Ձ | բավարար |
| 1, 3, 4, 6, 7, 11 | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | բավարար |
| 1, 4, 5, 9-11 | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | բավարար |
| 4-6, 9-11 | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | բավարար |
| 9, 10 | «ՍՈՖԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ | բավարար |
| 1, 3-7, 9-11 | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | բավարար |

1. 12.10.2021թ. Հանձնաժողովի նիստը կասեցնել՝ բավարար գնահատված մասնակիցների հետ 3-րդ չափաբաժնի մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով, քանի որ առկա էր նվազագույն գնային առաջարկների հավասարություն:

2. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 15.10.2021թ. ժամը 12:30-ն, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 1 հասցեում գտնվող «Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» ՊՈԱԿ-ի շենքում:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. 15.10.2021թ. հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին բավարար գնահատված և բանակցություններին հրավիրված մասնակիցներից ներկա էր «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ-ն:

Հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակեց մյուս մասնակիցների համար, և բանակցությունների համար սահմանեց ժամկետ՝ առավելագույնը 15 րոպե տևողությամբ:

2. Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին մասնակիցների կողմից ներկայացված նոր գնային առաջարկներն են.

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանում | Մասնակցի կողմից ներկայացված նոր նվազեցված գնային առաջարկ | | |
|---|---|---|---|---|
| | | Գինը առանց ԱԱՀ | ԱԱՀ | Գինը ներառյալ ԱԱՀ |
| 3 | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | 5,940.00 | - | 5,940.00 |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Զբաղեցրած տեղ | Մասնակցի Անվանում | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| 1 | 3 | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | | 24,000.00 |
| | 2 | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | | 23,750.00 |
| | 1 | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | X | 22,500.00 |
| 3 | 1 | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | X | 5,940.00 |
| | 2 | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | | 8,500.00 |
| 4 | 4 | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | | 12,000.00 |
| | 1 | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | X | 7,083.33 |
| | 2 | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | | 8,333.00 |
| | 3 | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | | 10,000.00 |
| 5 | 4 | «Հարություն Կարապետյան» Ա/Ձ | | 78,000.00 |
| | 1 | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | X | 4,500.00 |
| | 3 | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | | 10,833.00 |
| | 2 | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | | 8,000.00 |
| 6 | 3 | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | | 18,600.00 |
| | 1 | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | X | 6,000.00 |
| | 2 | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | | 15,000.00 |
| 7 | 1 | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | X | 16,000.00 |
| | 2 | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» | | 26,000.00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Ա/Ձ | | |
| 9 | 1 | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | X | 125,000.00 |
| | 2 | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | | 133,333.00 |
| | 3 | «ՍՈՖԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ | | 141,666.67 |
| | 4 | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | | 145,000.00 |
| 10 | 4 | «Հարություն Կարապետյան» Ա/Ձ | | 519,000.00 |
| | 3 | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | | 389,166.66 |
| | 2 | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | | 366,667.00 |
| | 1 | «ՍՈՖԹ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ | X | 358,333.33 |
| | 5 | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | | 730,000.00 |
| 11 | 3 | «Սեյրան Բալայան Արթուրի» Ա/Ձ | | 65,000.00 |
| | 1 | «Արվա Պրոֆ» ՍՊԸ | X | 16,666.66 |
| | 4 | «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ | | 100,000.00 |
| | 2 | «Ռուզաննա Մինասյան Վաղինակի» Ա/Ձ | | 40,000.00 |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Եսայանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը.

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Լ. Բոյաջյան (ստորագրություն)

*Հանձնաժողովի անդամներ՝*

Յ. Սարգսյան (ստորագրություն)

Ա. Սահակյան (ստորագրություն)

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Եսայան (ստորագրություն)